ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

(արտահերթ նիստը գումարվել է 2024թվականի փետրվարի 12-ին)

Նիստին ներկա էին մանկավարժական խորհրդի 26 անդամներից 26-ը:

Օրակարգում՝

1. Օրակարգի հաստատում

(զեկուցող՝ տնօրեն Ա. Սարուխանյան)

2. Մանկավարժական խորհրդի կազմից կառավարման խորհրդի անդամ Ա. Սահակյանի լիազորությունները դադարեցնելու մասին:

(հաղորդող՝ տնօրեն Ա. Սարուխանյան)

3. Մանկավարժական խորհրդի կազմից կառավարման խորհրդի անդամի ընտրության մասին:

(հաղորդող՝ տնօրեն Ա. Սարուխանյան

Օրակարգում՝

Լսեցին – 1. Օրակարգի մասին տնօրեն Ա. Սարուխանյանի հաղորդումը: Մանկավարժական խորհուրդը

Որոշում է

Հաստատել ՄԽ-ի փետրվարի 12-ի օրակարգը:

Օրակարգում՝

Լսեցին -2.Դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի տեղեկատվությունը մանկավարժական խորհրդի կազմից կառավարման խորհրդի անդամ Ա. Սահակյանի լիազորությունները դադարեցնելու մասին: Նշվեց, որ Ա.Սահակյանը խորհրդում իր անդամակցությունը դադարեցնելու մասին դիմում է ներկայացրել:

Որոշում է

1. Դադարեցնել մանկավարժական խորհրդի կազմից կառավարման խորհրդի անդամ Ա. Սահակյանի լիազորությունները:

Օրակարգում՝

Լսեցին-3. Տնօրեն Ա.Սարուխանյանի հաղորդումը մանկավարժական խորհրդի կազմից կառավարման խորհրդի մեկ անդամ ընտրելու մասին: Նա հայտնեց, որ, առաջնորդվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ. մարտի 15-ի N25-Ն հրամանի հավելվածով, որով սահմանվում է պետական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը, հարկ է կազմակերպել կառավարման խորհրդի մեկ անդամի ընտրություն: Լրացուցիչ ծանուցվեց նաև վերոնշյալ կարգի 11-րդ կետը: Նշվեց, որ կառավարման խորհրդի կազմում կարող է ընդգրկվել առնվազն 3 տարվա մանկավարժական ստաժ ունեցող մանկավարժական խորհրդի անդամը: Եվ մանկխորհուրդը իրավազոր է, եթե խորհրդի ընտրության ժամանակ մասնակցում է մանկավարժական խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի 1 ձայնի իրավունք, ձայնի փոխանցումն արգելվում է:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքները կներկայացնի հաշվիչ հանձնաժողովը՝ բաղկացած 3 անդամներից:

Մանկավարժական խորհուրդը, լսելով տնօրեն Ա. Սարուխանյանի տեղեկատվությունը և հավանություն տալով մանկավարժական խորհրդի անդամների առաջարկություններին,

Որոշում է

1. Հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկել Կ.Ասատրյանին, Շ.Ալավերդյանին և Ա. Հակոբյանին:

2. Քվեարկության դնել Ա. Կարապետյանի և Գ. Փարսիլյանի թեկնածությունները:

3. Հավանություն տալ փակ գաղտնի քվեարկությամբ ընտրված Գ. Փարսիլյանի (18 ձայն) անդամությանը կառավարման խորհրդում:

4. Կառավարման խորհրդում վերոնշյալ մանկավարժի անդամությունը հաստատելու համար արդյունքը ներկայացնել Արմավիրի մարզպետ Դ. Խուդաթյանի հաստատմանը:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ Ա.Սարուխանյան

Քարտուղար՝ Ս.Զարգարյան